Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Պ-423-17.12.2019,10.04.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 57-րդ կետում «վաճառատեղ» բառից հետո լրացնել «, շրջիկ առևտրի կետ» բառերը,

2) 58-րդ կետը «համար» բառից հետո լրացնել «, ինչպես նաև շրջիկ առևտրի կետ» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 55-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 5-րդ կետը «կտրոն» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն)» բառերով,

2) 3-րդ մասի 2-րդ կետում «Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը (տվյալները)» բառերը փոխարինել «սահմանված պարտադիր տեղեկատվությունից (տվյալներից) բացի կտրոնի վրա ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)» բառերով, իսկ «ձեռք բերված ապրանքի» բառերը փոխարինել «ապրանքի մատակարարումը կամ» բառերով,

3) 11-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 56-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 1-ին կետում «հսկիչ» բառից առաջ լրացնել «Օրենսգրքի 380-րդ հոդվածով սահմանված» բառերը,

2) 4-րդ մասում «8-րդ մասով» բառերը փոխարինել «8-րդ և 8.1-ին մասերով» բառերով,

3) 8-րդ մասի 1-ին կետում «հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնների)» բառերը փոխարինել «Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերը» բառերով.

4) 8-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մասով.

8.1. Օրենսգրքի 380-րդ և 380.1-ին հոդվածներին համապատասխան հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողները պատվերների հիման վրա մանրածախ վաճառք (առաքում) իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնները կարող են տպագրել (գեներացնել) նախօրոք՝ պայմանով, որ ապրանքների մատարարման (առաքման) դեպքում դրանք պետք է տպագրվեն (գեներացվեն) մինչև մատակարարվող ապրանքների՝ առաքման վայրից կամ առաքման կետից դուրս բերելը:

Հոդված 4. Օրենսգրքի 57-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «հարկ վճարողի կողմից Օրենսգրքով սահմանված դեպքերում կանխիկ դրամական հաշվարկներով ձեռք բերված ապրանքների տեղափոխության դեպքում» բառերը փոխարինել «Օրենսգրքով սահմանված դեպքերում» բառերով,

2) 2-րդ մասից հետո լրացնել 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Կառավարության սահմանած կարգով դուրս գրված (գեներացված) էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնը սույն հոդվածի իմաստով հանդիսանում է ուղեկցող փաստաթուղթ:»,

3) 7-րդ մասում «Օրենսգրքով սահմանված դեպքերում կանխիկ դրամական հաշվարկներով վաճառված ապրանքների վրա, երբ պարտադիր է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը» բառերը փոխարինել «վաճառված ապրանքների վրա, երբ

պարտադիր է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը, բացառությամբ շրջիկ առևտրի կետերի և Օրենսգրքի 56-րդ հոդվածի 8.1-ին մասով սահմանված դեպքերի» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 380-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը «օբյեկտների,» բառից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետերի,» բառերով,

2) 3-րդ մասի 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 380.1-ին հոդվածով.

«**380.1. էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառությունը**

1. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի (էլեկտրոնային առևտրային հարթակի) միջոցով ընդունվող պատվերների շրջանակներում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների մասով կարող է կիրառվել էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա:

2. էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենան ծրագրային ապահովում է, որը հնարավորություն է ընձեռում ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի (էլեկտրոնային առևտրային հարթակի) միջոցով ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների համար գեներացնել էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն:

3.էլեկտրոնային կտրոն ձևավորվում է հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգին սույն հոդվածի 4-րդ մասում նշված ձևաչափով սահմանվող տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով փոխանցելու և հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգից էլեկտրոնային եղանակով ֆիսկալային համար ստանալու ու էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնի վրա պարտադիր տպագրման ենթակա տեղեկատվությունը արտացոլելու միջոցով:

4. էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների տեխնիկական պահանջները, դրանց հաշվառման, հաշվառումից հանման, դրանց միջոցով տրամադրվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմաններին ներկայացվող, ինչպես նաև ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածին (էլեկտրոնային առևտրային հարթակին) ներկայացվող պահանջները սահմանում է Կառավարությունը: էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի և հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգի միջև տեղեկատվության փոխանակումն իրականացվում է հարկային մարմնի կողմից հաստատված հատուկ ձևաչափով (վեբ ծառայության նկարագիր):

5. էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները չպահպանելն առաջացնում է Օրենսգրքով սահմանված պատասխանատվություն:»:

Հոդված 7. Օրենսգրքի 381-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «օբյեկտի,» բառից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետի,» բառերով և մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Շրջիկ առևտրի կետերի միջոցով, ինչպես նաև Օրենսգրքի 56-րդ հոդվածի 8.1-ին մասով սահմանված դեպքերում մանրածախ վաճառք իրականացնող կամ բնակչությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնի) վրա սույն հոդվածի 3-րդ մասի 8-րդ և 9-րդ կետով նախատեսված՝ ապրանքի անվանման և ապրանքային դիրքի, ծառայության անվանման և կոդի, գնվող ապրանքի քանակի, դրա չափման միավորի տպագրումը պարտադիր է՝ անկախ Կառավարության սահմանած կարգից ու ժամկետներից:»,

2) 3-րդ մասում՝

ա. 3-րդ կետը «հասցեն» բառից հետո լրացնել «, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն, ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համարանիշը» բառերը,

բ. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) կտրոնի տպագրման վայրկյանը, րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին, իսկ արտաքին (առևտրային) ծրագիր կիրառելու դեպքում հսկիչ դրամարկղային մեքենայի կողմից գեներացվող վայրկյանը, րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին.»,

գ. 16-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-րդ կետով.

«17) հարկային մարմնի կողմից հաստատված ալգորիթմով գեներացվող ֆիսկալ համար՝ 8 նիշ (բացառությամբ վերադարձի կտրոնների):

Հոդված 8. Օրենսգրքի 384-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետը «վայրում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով,

2) 4-րդ մասի 2-րդ կետը «հասցեն» բառից հետո լրացնել «, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ շրջիկ առևտրի կետ հանդիսացող ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համարանիշը» բառերով,

3) 7-րդ մասը «վայրի տարածքի» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետի» բառերով, իսկ «տարածք» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետ» բառերով,

4) 8-րդ մասը «տեսանելի մասում» բառերից հետո լրացնել «, շրջիկ առևտրի կետերի դեպքում՝ ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) վրա» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 416-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «պահին և վայրում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով,

2) 2-րդ մասի 1-ին կետը «այդ վայրում» բառերից հետո լրացնել «, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով,

3) 4-րդ մասի 1-ին կետը, 5-րդ մասի 1-ին կետը և 8-րդ մասը «առևտրի օբյեկտում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով,

4) 9-րդ մասը «առևտրի օբյեկտներում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետերում» բառերով,

5) 11-րդ մասը «տեսանելի տեղում» բառերից հետո լրացնել «, շրջիկ առևտրի կետերի դեպքում՝ ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) վրա» բառերով:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: Օրենսգրքի 56-րդ հոդվածի 8.1-ին մասով սահմանված դրույթները Օրենսգրքի 380-րդ հոդվածով սահմանված կարգավորումների մասով գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ Պ-423-17.12.2019,10.04.2020-ՏՀ-011/1
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 380-րդ հոդվածի 1-ին մասը «օբյեկտների,» բառերից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետերի,» բառերով։~~

~~**Հոդված 2.** Օրենսգրքի 381-րդ հոդվածի՝~~

~~1) 2-րդ մասում «օբյեկտի,» բառից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետի,» բառերով,~~

~~2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով՝~~

~~«Շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնող կամ բնակչությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնի) վրա սույն հոդվածի 3-րդ մասի 8-րդ և 9-րդ կետով նախատեսված՝ ապրանքի անվանման և ապրանքային դիրքի, ծառայության անվանման և կոդի, գնվող ապրանքի քանակի, դրա չափման միավորի տպագրումը պարտադիր է՝ անկախ Կառավարության սահմանած կարգից ու ժամկետներից։»,~~

~~3) 3-րդ մասի 3-րդ կետը «հասցեն» բառից հետո լրացնել «, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն, ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համարանիշը» բառերը։~~

~~**Հոդված 3.** Օրենսգրքի 384-րդ հոդվածում՝~~

~~1) 1-ին մասի 1-ին կետը «վայրում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով,~~

~~2) 4-րդ մասի 2-րդ կետը «հասցեն» բառից հետո լրացնել «,իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ շրջիկ առտրի կետ հանդիսացող ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համարանիշը» բառերով,~~

~~3) 7-րդ մասը «վայրի տարածքի» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետի» բառերով, իսկ «տարածք» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետ» բառերով,~~

~~4) 8-րդ մասը «տեսանելի մասում» բառերից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետերի դեպքում՝ ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) վրա» բառերով։~~

~~**Հոդված 4.** Օրենսգրքի 416-րդ հոդվածում՝~~

~~1) 1-ին մասը «պահին և վայրում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով,~~

~~2) 2-րդ մասի 1-ին կետը «այդ վայրում» բառերից հետո լրացնել «իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով,~~

~~3) 4-րդ մասի 1-ին կետը, 5-րդ մասի 1-ին կետը և 8-րդ մասը «առևտրի օբյեկտում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով,~~

~~4) 9-րդ մասը «առևտրի օբյեկտներում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետերում» բառերով,~~

~~5) 10-րդ մասը «տեսանելի տեղում» բառերից հետո լրացնել «, շրջիկ առևտրի կետերի դեպքում՝ ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) վրա» բառերով։~~

~~**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երրորդ ամսվա 1-ից։~~

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 57-րդ կետում «վաճառատեղ» բառից հետո լրացնել «, շրջիկ առևտրի կետ» բառերը,

2) 58-րդ կետը «համար» բառից հետո լրացնել «, ինչպես նաև շրջիկ առևտրի կետ» բառերով։

Հոդված 2. Օրենսգրքի 55-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 5-րդ կետը «կտրոն» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն)» բառերով,

2) 3-րդ մասի 2-րդ կետում «Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը (տվյալները)» բառերը փոխարինել «սահմանված պարտադիր տեղեկատվությունից (տվյալներից) բացի կտրոնի վրա ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող

կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)» բառերով, իսկ «ձեռք բերված ապրանքի» բառերը փոխարինել «ապրանքի մատակարարումը կամ» բառերով,

3) 11-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 56-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 1-ին կետում «հսկիչ» բառից առաջ լրացնել «Օրենսգրքի 380-րդ հոդվածով սահմանված» բառերը,

2) 4-րդ մասում «8-րդ մասով» բառերը փոխարինել «8-րդ և 8.1-ին մասերով» բառերով,

3) 8-րդ մասի 1-ին կետում «հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնների)» բառերը փոխարինել «Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերը» բառերով.

4) 8-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մասով.

8.1. Օրենսգրքի 380-րդ և 380.1-ին հոդվածներին համապատասխան հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողները պատվերների հիման վրա մանրածախ վաճառք (առաքում) իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնները կարող են տպագրել (գեներացնել) նախօրոք՝ պայմանով, որ ապրանքների մատարարման (առաքման) դեպքում դրանք պետք է տպագրվեն (գեներացվեն) մինչև մատակարարվող ապրանքների՝ առաքման վայրից կամ առաքման կետից դուրս բերելը:

Հոդված 4. Օրենսգրքի 57-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «հարկ վճարողի կողմից Օրենսգրքով սահմանված դեպքերում կանխիկ դրամական հաշվարկներով ձեռք բերված ապրանքների տեղափոխության դեպքում» բառերը փոխարինել «Օրենսգրքով սահմանված դեպքերում» բառերով,

2) 2-րդ մասից հետո լրացնել 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Կառավարության սահմանած կարգով դուրս գրված (գեներացված) էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնը սույն հոդվածի իմաստով հանդիսանում է ուղեկցող փաստաթուղթ:»,

3) 7-րդ մասում «Օրենսգրքով սահմանված դեպքերում կանխիկ դրամական հաշվարկներով վաճառված ապրանքների վրա, երբ պարտադիր է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը» բառերը փոխարինել «վաճառված ապրանքների վրա, երբ պարտադիր է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը, բացառությամբ շրջիկ առևտրի կետերի և Օրենսգրքի 56-րդ հոդվածի 8.1-ին մասով սահմանված դեպքերի» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 380-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը «օբյեկտների,» բառից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետերի,» բառերով,

2) 3-րդ մասի 11-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 380.1-ին հոդվածով.

«**380.1. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառությունը**

1. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի (էլեկտրոնային առևտրային հարթակի) միջոցով ընդունվող պատվերների շրջանակներում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների մասով կարող է կիրառվել էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա:

2. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենան ծրագրային ապահովում է, որը հնարավորություն է ընձեռում ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի (էլեկտրոնային առևտրային հարթակի) միջոցով ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների համար գեներացնել էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն:

3.Էլեկտրոնային կտրոն ձևավորվում է հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգին սույն հոդվածի 4-րդ մասում նշված ձևաչափով սահմանվող տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով փոխանցելու և հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգից էլեկտրոնային եղանակով ֆիսկալային համար ստանալու ու էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնի վրա պարտադիր տպագրման ենթակա տեղեկատվությունը արտացոլելու միջոցով:

4. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների տեխնիկական պահանջները, դրանց հաշվառման, հաշվառումից հանման, դրանց միջոցով տրամադրվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմաններին ներկայացվող, ինչպես նաև ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածին (էլեկտրոնային առևտրային հարթակին) ներկայացվող պահանջները սահմանում է Կառավարությունը: Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի և հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգի միջև տեղեկատվության փոխանակումն իրականացվում է հարկային մարմնի կողմից հաստատված հատուկ ձևաչափով (վեբ ծառայության նկարագիր):

5. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները չպահպանելն առաջացնում է Օրենսգրքով սահմանված պատասխանատվություն:»:

Հոդված 7. Օրենսգրքի 381-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «օբյեկտի,» բառից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետի,» բառերով և մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Շրջիկ առևտրի կետերի միջոցով, ինչպես նաև Օրենսգրքի 56-րդ հոդվածի 8.1-ին մասով սահմանված դեպքերում մանրածախ վաճառք իրականացնող կամ բնակչությանը

ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնի) վրա սույն հոդվածի 3-րդ մասի 8-րդ և 9-րդ կետով նախատեսված՝ ապրանքի անվանման և ապրանքային դիրքի, ծառայության անվանման և կոդի, գնվող ապրանքի քանակի, դրա չափման միավորի տպագրումը պարտադիր է՝ անկախ Կառավարության սահմանած կարգից ու ժամկետներից:»,

2) 3-րդ մասում՝

ա. 3-րդ կետը «հասցեն» բառից հետո լրացնել «, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն, ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համարանիշը» բառերը,

բ. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) կտրոնի տպագրման վայրկյանը, րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին, իսկ արտաքին (առևտրային) ծրագիր կիրառելու դեպքում հսկիչ դրամարկղային մեքենայի կողմից գեներացվող վայրկյանը, րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին.»,

գ. 16-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-րդ կետով.

«17) հարկային մարմնի կողմից հաստատված ալգորիթմով գեներացվող ֆիսկալ համար՝ 8 նիշ (բացառությամբ վերադարձի կտրոնների):

Հոդված 8. Օրենսգրքի 384-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետը «վայրում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով,

2) 4-րդ մասի 2-րդ կետը «հասցեն» բառից հետո լրացնել «, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով - մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ շրջիկ առևտրի կետ հանդիսացող ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համարանիշը» բառերով,

3) 7-րդ մասը «վայրի տարածքի» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետի» բառերով, իսկ «տարածք» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետ» բառերով,

4) 8-րդ մասը «տեսանելի մասում» բառերից հետո լրացնել «, շրջիկ առևտրի կետերի դեպքում՝ ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) վրա» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 416-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «պահին և վայրում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով,

2) 2-րդ մասի 1-ին կետը «այդ վայրում» բառերից հետո լրացնել «, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով,

3) 4-րդ մասի 1-ին կետը, 5-րդ մասի 1-ին կետը և 8-րդ մասը «առևտրի օբյեկտում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով,

4) 9-րդ մասը «առևտրի օբյեկտներում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետերում» բառերով,

5) 11-րդ մասը «տեսանելի տեղում» բառերից հետո լրացնել «, շրջիկ առևտրի կետերի դեպքում՝ ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) վրա» բառերով:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: Օրենսգրքի 56-րդ հոդվածի 8.1-ին մասով սահմանված դրույթները Օրենսգրքի 380-րդ հոդվածով սահմանված կարգավորումների մասով գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ Պ-423-17.12.2019,10.04.2020-ՏՀ-011/1 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «բառերից հետո» բառերը փոխարինել «բառից հետո» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասում «տեսանելի մասում» բառերից հետո դնել ստորակետ կետադրական նշան:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	Օրենսգրքի 416-րդ հոդվածի	Օրենսգրքի 416-րդ հոդվածի 10-րդ մասում «տեսանելի տեղում» բառեր առկա չեն: Այս առումով, առաջարկում ենք նշյալ լրացումը կատարել Օրենսգրքի 416-րդ հոդվածի 11-	Ընդունվել է	Ընդունվել է

		10-րդ մաս	րդ մասում:		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծով լրացումներ կատարել նաև Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 57-րդ և 58-րդ կետերում	Նախագծով լրացումներ կատարել նաև Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 57-րդ և 58-րդ կետերում: Մասնավորապես, առաջարկում ենք 57-րդ կետում «վաճառատեղ» բառից հետո լրացնել «,շրջիկ առևտրի կետ» բառերը, իսկ 58-րդ կետում «համար» բառից հետո լրացնել «, ինչպես նաև շրջիկ առևտրի կետ» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	Օրենսգրքի 55-րդ հոդված	Նախագծով լրացում և փոփոխություն կատարել Օրենսգրքի 55-րդ հոդվածում: Մասնավորապես, առաջարկում ենք Օրենսգրքի 55-րդ հոդվածի՝ 1) 2-րդ մասի 5-րդ կետում «կտրոն» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն)» բառերը, 2) 3-րդ մասի 2-րդ կետում «Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված տեղեկատվությունը (տվյալները)» բառերը փոխարինել «կտրոնի վրա սահմանված պարտադիր տեղեկատվությունից (տվյալներից) բացի ապրանք ձեռք բերող, աշխատանք ընդունող և (կամ) ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)» բառերով, իսկ «ձեռք բերված ապրանքի» բառերը փոխարինել «ապրանքի մատակարարումը կամ» բառերով, 3) 11-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:	Ընդունվել է	Ընդունվել է

6.	ՀՀ կառավարություն	Օրենս-գրքի 56-րդ հոդված	Օրենսգրքի 56-րդ հոդվածի՝ 1) 3-րդ մասի 1-ին կետում «հսկիչ» բառից առաջ լրացնել «Օրենսգրքի 380-րդ հոդվածով սահմանված» բառերը, 2) 4-րդ մասում «8-րդ մասով» բառերը փոխարինել «8-րդ և 8.1-ին մասերով» բառերով, 3) 8-րդ մասի 1-ին կետում «հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնների)» բառերը փոխարինել «Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերը» բառերով, 4) 8-րդ մասից հետո լրացնել 8.1-ին մաս՝ հետևյալ բովան-դակությամբ. «8.1. Օրենսգրքի 380-րդ և 380.1-րդ հոդվածներին համապատասխան հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողները պատվերների հիման վրա մանրածախ վաճառք (առաքում) իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառա-յություններ մատուցելիս հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնները կարող են տպագրել (գեներացնել) նախօրոք՝ պայմանով, որ ապրանքների մատակարարման (առաքման) դեպքում դրանք պետք է տպագրվեն (գեներացվեն) մինչև մատակարարվող ապրանքների՝ առաքման վայրից կամ առաքման կետից դուրս բերելը։»:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ՀՀ կառավարություն	Նախագիծ ը լրացնել նոր հոդվածով	Նախագիծը լրացնել նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. Օրենսգրքի 57-րդ հոդվածի՝ 1) 2-րդ մասում «հարկ վճարողի կողմից Օրենսգրքով սահմանված դեպքերում կանխիկ դրամական հաշվարկներով ձեռք բերված ապրանքների տեղափոխության դեպքում՝» բառերը փոխարինել «Օրենսգրքով սահմանված դեպքերում» բառերով, 2) 2-րդ մասից հետո լրացնել 2.1-ին մաս՝ հետևյալ	Ընդունվել է	Ընդունվել է

			բովանդակությամբ. «2.1. Կառավարության սահմանած կարգով դուրս գրված (գեներացված) էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնը սույն հոդվածի կիրառության իմաստով հանդիսանում է ուղեկցող փաստաթուղթ։», 3) 7-րդ մասում «Օրենսգրքով սահմանված դեպքերում կանխիկ դրամական հաշվարկներով վաճառված ապրանքների վրա, երբ պարտադիր է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը» բառերը փոխարինել «վաճառված ապրանքների վրա, երբ պարտադիր է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառումը, բացառությամբ շրջիկ առևտրի կետերի և Օրենսգրքի 56-րդ հոդվածի 8.1-րդ մասով սահմանված դեպքերի» բառերով։		
8.	ՀՀ կառավարություն	Օրենսգրքի 380-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետ	Նախագծով ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 380-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետը։	Ընդունվել է	Ընդունվել է
9.	ՀՀ կառավարություն	Նախագիծը լրացնել նոր հոդվածով	Նախագիծը լրացնել նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. Օրենսգիրքը լրացնել 380.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 380.1. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառությունը 1. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի (էլեկտրոնային առևտրային հարթակի) միջոցով ընդունվող պատվերների շրջանակներում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների մասով կարող է կիրառվել	Ընդունվել է	Ընդունվել է

			էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա: 2. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենան ծրագրային ապահովում է, որը հնարավորություն է ընձեռում ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածի (էլեկտրոնային առևտրային հարթակի) միջոցով ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների համար գեներացնել էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն: 3. Էլեկտրոնային կտրոն ձևավորվում է հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգին սույն հոդվածի 4-րդ մասում նշված ձևաչափով սահմանվող տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով փոխանցելու և հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգից էլեկտրոնային եղանակով ֆիսկալային համար ստանալու ու էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնի վրա պարտադիր տպագրման ենթակա տեղեկատվությունը արտացոլելու միջոցով: 4. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների տեխնիկական պահանջները, դրանց հաշվառման, հաշվառումից հանման, դրանց միջոցով տրամադրվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմաններին ներկայացվող, ինչպես նաև ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածին (էլեկտրոնային առևտրային հարթակին) ներկայացվող պահանջները սահմանում է Կառավարությունը: Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի և հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգի միջև տեղեկատվության փոխանակումն իրականացվում է հարկային մարմնի կողմից հաստատված հատուկ ձևաչափով (վեբ ծառայության նկարագիր):		

			5. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները չպահպանելն առաջացնում է Օրենսգրքով սահմանված պատասխանատվություն։»։		
9.	ՀՀ կառավարություն	նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետ	նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Շրջիկ առևտրի կետերի միջոցով, ինչպես նաև Օրենսգրքի 56-րդ հոդվածի 8.1-րդ մասով սահմանված դեպքերում մանրածախ վաճառք իրականացնող կամ բնակչությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնի) վրա սույն հոդվածի 3-րդ մասի 8-րդ և 9-րդ կետով նախատեսված՝ ապրանքի անվանման և ապրանքային դիրքի, ծառայության անվանման և կոդի, գնվող ապրանքի քանակի, դրա չափման միավորի տպագրումը պարտադիր է՝ անկախ Կառավարության սահմանած կարգից ու ժամկետներից։»։	Ընդունվել է	Ընդունվել է
10.	ՀՀ կառավարություն	Օրենսգրքի 381-րդ հոդված	Օրենսգրքի 381-րդ հոդվածի՝ 1) 3-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6) կտրոնի տպագրման վայրկյանը, րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին, իսկ արտաքին (առևտրային) ծրագիր կիրառելու դեպքում հսկիչ դրամարկղային մեքենայի կողմից գեներացվող վայրկյանը, րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին.», 2) 16-րդ կետից հետո լրացնել 17-րդ կետ՝ հետևյալ	Ընդունվել է	Ընդունվել է

			բովանդակությամբ. «17) հարկային մարմնի կողմից հաստատված ալգորիթմով գեներացվող ֆիսկալ համար՝ 8 նիշ։»։		
11.	ՀՀ կառավարություն	Օրենս-գրքի 56-րդ հոդվածի 8.1-րդ մաս	Օրենսգրքի 56-րդ հոդվածի 8.1-րդ մասով սահմանված դրույթները Օրենսգրքի 380-րդ հոդվածով սահմանված կարգավորումների մասով գործում են մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը։	Ընդունվել է	Ընդունվել է
12.	Լուսավոր Հայաստան խմբակցություն	Օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մաս	Օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր կետ՝ «ՀԴՄ կտրոնում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, բայց ոչ ավել քան 300 հազար ՀՀ դրամ և մեկ ամսվա կտրվածով 3 մլն. Դրամ, եթե ՀԴՄ կտրոնի վրա նշված է գնորդին ՀՎՀՀ-ն։»։	Չի ընդունվել	Չի ընդունվել